

Ժողովուրդ

105
(2771)

20 հունիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

Ա. ԴԱՎՈՅԱՆԻ ՎԱՐՁԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՆ Է ՓՈԽՐԱՏՈՒՑՈՒՄ



«ՀՀ ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ «Երեւան քաղաքում բնակարան չունեցող պատգամավորին տրվում է Երեւան քաղաքում բնակարանի վարձին համարժեք փոխհատուցում»: Այս հոդվածը տարիներ շարունակ գործել է եւ կիրառվել, ու թեւեւ մասնավորեցված չէ, թե որ պատգամավորները կարող են օգտվել այս դրույթից, ավանդաբար այս հոդվածով ընձեռնված հնարավորությունից օգտվել են պատգամավորներ, որոնք մարզերից են ընտրվել՝ մեծամասնական ընտրակարգով: Այսինքն՝ նախկինում, երբ գործում էր նաեւ ընտրության մեծամասնական ձեռնարկը, երբ ընտրողները իրենց համայնքներում ու մարզերում էին պատգամավորներ ընտրում, պատգամավորները ստիպված էին լինում մարզերից գալ Երեւան ու վարձով բնակվել մայրաքաղաքում, դրա համար էլ պատգամավորների երաշխիքների մասին օրենքում նշված է եղել, որ պետք է նրանց ապահովել բնակարանի վարձին համարժեք փոխհատուցում:

Նիկոլ Փաշինյանի գլխավորած կուսակցության պատգամավորները որոշել են օգտվել օրենքի վերջ նշված հոդվածից, եւ ով տուն չունի, պետության հաշվին վարձավճարի փոխհատուցում է ստանում: «Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ-ից պահանջել է տրամադրել, թե 2021, 2022, 2023 թվականներին որ պատգամավորներն են վարձավճարի փոխհատուցում ստացել: Օրինակ՝ ԶՊ վարչության անդամ Արփի Դավոյանը 2021 թվականին, երբ ԱԺ պատգամավոր է ընտրվել, պատգամավորի աշխատավարձին, ներկայացուցչական ծախսի համար նախատեսված գումարին եւ պարգևավճարներին զուգահեռ, նաեւ ամսական 100 հազար դրամ գումար է ստացել՝ որպես բնակարանի վարձավճար:


Ըստ կենսագրության՝ Արփին Դավոյանը 2009-ից աշխատել է Երեւանի դպրոցներից մեկում որպես հոգեբան, այսինքն՝ երկար տարիներ բնակվել է Երեւանում, տուն չի ունեցել: ԱԺ պատգամավոր է ընտրվել 2018 թվականին ու սկսել է պետության հաշվին վարձավճար ստանալ: Նիկոլ Փաշինյանը ընդդիմադիր ժամանակ ասում էր՝ պետությունը միտքներ կամ պետությունը հաշվին սեփական բարեկեցությունը կառուցողներ: Հիմա, թերեւս, իր կողքին հենց այդպիսի մարդիկ են, որոնք մտխուր են պետությունը:

Երեւանի ավագանու ընտրություններում իշխող ԶՊ-ի ընտրացուցակի 3-րդ համարը՝ առաջին կինը, մայրաքաղաք Երեւանի քաղաքաշինության եւ հողագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանն է: Թեւեւ նա ի պաշտոնէ պետք է քաղաքաշինական ճգնաժամի մասին հոգ տանի, բայց մայրաքաղաքը ճկում է քաղաքաշինական բեռի տակ. առանց բացառության բոլոր համայնքներում շինարարություն է ընթանում՝ հաճախ իրավական նորմերին չհամապատասխանող, բայց Վարդանյանը Երեւանի փողոցների անվանափոխության հարցում է առավել ակտիվ: Հիմա էլ զբաղված է երեւանցի արվեստագետների հետ քաղաքային իշխանության հարաբերությունների ջերմացմամբ: Իսկ քաղաքաշինությունը նրան հետաքրքրում է՝ զուտ ազգակցական կապերով պայմանավորված, քանի որ նրա հորեղբայրը՝ ճարտարապետ Լեւոն Վարդանյանը՝ հայտնի մակնուսով, չի կտրվում Երեւանի քաղաքաշինության ոլորտից: Լեւոն Վարդանյանը Երեւանի նախկին գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանի կադրերից է, որը նաեւ Արթուր Մեսյանի ժամանակ էր շարունակում «գերիշխող» դիրք ունենալ քաղաքային այդ ոլորտում: Այսինքն՝ քաղաքաշինական ոլորտում շարունակում են թելադրող մնալ նախկին կադրերն ու բարքերը: Դե իսկ Նուարդ Վարդանյանի ամուսինն էլ նորահայտ քիմիկոս է. Ստեփան Սարգսյանը ՀՀ կառավարության՝ արտադրական կանեփի թույլատրման որոշումից անմիջապես հետո հիմնադրված «Գրոուար» ընկերության բաժնետոմսերի 45 տոկոսի բաժնետերն է: Այսինքն՝ ԶՊ ավագանու ընտրացուցակի 3-րդ համարը եւ նախկին է, եւ նոր հարստացած ներկա: Ի դեպ, Նուարդ Վարդանյանի քույրը ԱԺ պատգամավոր Շուկիսար Վարդանյանն է, որը պետությունից հաշվին ամենաշատը գործուղման մեկնած պատգամավորներից է: Իսկ Նուարդի հայրը ժողով է՝ Գեորգ Վարդանյանը. 1993-ին եղել է ՀՀ պետնախարար, 1995-1998թթ.՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, 1998-2000թթ.՝ բնապահպանության նախարար: Նուարդ Վարդանյանը հայտնի դարձավ հանրությանը իր ազդեցիկ մի արտահայտությամբ, երբ հայտարարեց. «Ես՝ որպես 90-ականների երեխա, ով եղ սարսափի մեջ է մեծացել, թույլ չեմ տալու, որ զարմուհին ու մսացած մեր երեխաները դա ապրեն: Անհրաժեշտության դեպքում հատ-հատ բոլորիդ ականջները կծամեմ»: Ահա «ականջ ծամելու» պատրաստակամություն հայտնածը ԶՊ-ի 3-րդ համարն է: Հերթով կանդիդատներն են թեկնածուներին:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հակակոռուպցիոն դատարանը, ամենայն հավանականությամբ, թույլ կտա ՀՀ նախկին ՊՆ Դավիթ Տոնոյանին ԱԱԾ մեկուսարանից գնալ ԱԺ քննիչ հանձնաժողով եւ իր տեսածն ու լսածը հայտնել քննիչ հանձնաժողովին: Բանն այն է, որ քաղաքական իշխանությունները բացատրել են դատարանին, որ քննիչ հանձնաժողովում քննվում է պետության համար կարելորագույն հարց, ու թեւեւ նախադեպ չկա, ամեն դեպքում, Դավիթ Տոնոյանի ցանկացած խոսքը կարող է լինել նոր քննության առարկա, եւ նրա ներկայանալը հանձնաժողով խիստ անհրաժեշտ է: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ դատական համակարգը հայտնվել է բարդ իրավիճակում: Դատավորները քննարկում են այն իրավիճակը, որ չկա որեւէ ընթացակարգ, որը հիմք ընդունելով՝ դատարանը թույլ տա ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանին ԱԱԾ մեկուսարանից հանել եւ տանել Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի նիստին մասնակցելու: «Ավելին՝ դատական համակարգում առաջ են քաշել այն հարցը, որ սովորաբար կալանավորին թույլ են տալիս դուրս գալ բանտից, երբ հարազատ մարդ է մահանում, կամ որեւէ քրեական գործով կալանավորին կանչում են հարցաքննության, քրեական վարույթով հույժ կարեւոր ցուցմունք տալու»: Փաստացի ստեղծվել է մի իրավիճակ, որ Դավիթ Տոնոյանը միջնորդել է թույլ տալ իրեն մասնակցել քննիչ հանձնաժողովի նիստին, որի մասով չկա որեւէ ընթացակարգ, ուստի դատական համակարգը չգիտի, թե ինչպես այս հարցին մոտենալ: Եւ, սհա, հրահանգով որոշվել է Տոնոյանին թույլատրել ներկայանալ խորհրդարան:

Պետական սեփականություն հանդիսացող կառույցների ու տարածքների պայմանների բարելավման ապահովման նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից վարչապետի աշխատակազմին կիսատկացվի 592 մլն 26 հազար դրամ: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ նման որոշում կընդունվի կառավարության վարչա նիստում: Նախագիծը ընդգրկված է չզեկուցողների շարքում եւ նաեւ գաղտնի կետ է պարունակում: Նկատենք, որ սա առաջին դեպքն է, երբ գաղտնի կետ ունեցող հարցով բյուջեից գումար է տրամադրվում: Իսկ ինչո՞ւ է գաղտնի. այն պարզ պատճառով, որ մոտ 1.5 մլն դոլար Նիկոլ Փաշինյանը հատկացնում է ինչ-որ շենքային պայմանների բարելավման համար: Սա՝ այն դեպքում, երբ սահմանափակ ընկալվալորում անգամ կենսական ջրի ու կենցաղային խնդիրներ կան, դպրոցներ ու մանկապարտեզներ կան, որ տարիներով չեն նորոգվում:



ԶՐՈՒՅՑ

ԿԱՆԻՍՏԵՍՎՈՒՄ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

«Ժողովուրդ» օրաթերթը խոսել է ՏՆՏԵՍԱԿԱՆ, նախկինում Ֆինանսավարկային, բյուջեային եւ ՏՆՏԵՍԱԿԱՆ հարցերի մեծական հանձնաժողովի անդամ Թաթուլ Մանասերյանի հետ: Փորձել ենք սահմալ դասկեր, թե ինչ ազդեցություններ է ունեցել ռուս-ուկրաինական դաժերազմը հայաստանյան ՏՆՏԵՍԱԿԱՆ վրա:

-Ռուս-ուկրաինական պատերազմից հետո հայաստանյան տնտեսությունն ի՞նչ վնասներ է կրել:


-Հայաստանի տնտեսությունը ռուս-ուկրաինական պատերազմից հետո չէմ կարծում, որ լուրջ վնասներ է կրել, այլ ճիշտ հակառակը: Տնտեսական առումով բավական լուրջ հնարավորություններ են առաջացել՝ սկսած անհատական, անձնական տրանսֆերների ներհոսքի ավելացումից, վերջացրած ներքին բիզնեսի աշխուժացումով, հատկապես՝ փոքր բիզնեսի ոլորտում, տեղեկատվական տեխնոլոգիաների, առևտրի, համախառն ներքին արդյունքի: այս ոլորտներում պահանջարկն է բարձրացել: Այսինքն՝ վնասներ չի կրել:

-Ասացիք, որ Հայաստանը հնարավորություններ է ստացել, ինչպե՞ս պիտի ճիշտ օգտագործենք այդ հնարավորությունները, ի՞նչ պիտի անենք, որ չենք անում:

-Այդ հարցին, լավ կլինի, Կառավարությունը պատասխանի: Պատրաստ են արդյոք, որտե՞ս սցենար մտածո՞ւմ են՝ ինչ անել ավելացած ռեսուրսների հետ: Բյուջեի ճիշտ բաշխում չի անում պետությունը:

-Ինչպիսի՞ տնտեսական իրավիճակ է այժմ Ռուսաստանում:

-Ռուսաստանը այժմ պատերազմում է գրեթե 51 երկրի դեմ, որովհետեւ 51 երկրից այժմ զենք է մատակարարվում Ռուսաստանի բանակին, եւ այս պահին Ռուսաստանը չի կարող ունենալ այն տնտեսությունը, որը կարող էր ունենալ կամ հավանական էր ունենալ խաղաղ պայմաններում: Այսօր ավելի շատ ռազմական արդյունաբերության մասին կարող է խոսք գնալ: Այնուամենայնիվ, տնտեսությունը, որը հիմնված է առաջին հերթին ածխաջրածինների վրա՝ նավթի, գազի արտահանման վրա, միջազգային շուկայում, կարծես թե, այս պայմաններում Ռուսաստանը կարողանում է իր ռեսուրսները բարեհաջող վաճառել, եւ այդ իմաստով, կարող ենք ասել, ցնցումներ չեն նկատվում:



-Նշված 51 երկրները արդյոք միայն ռազմական օգնություն են ցուցաբերում, այլ ուղղություններում օգնություն չի տրամադրվում:

-Ոչ, ոչ մի այլ ուղղությամբ օգնություն չի տրամադրվում Ռուսաստանին: Այսօր Արեւմուտքը միայն պահանջ է դրել՝ միանալ սանկցիաներին, այդ թվում՝ նաեւ Հայաստանին է հորդորում դա անել: Չնայած պարզ է, որ Հայաստանի վիճակը ավելի յուրահատուկ է, եւ նման բան մենք մեզ չենք կարող թույլ տալ այն պատճառով, որ մեզ համար Ռուսաստանը առևտրատնտեսական գործընկեր էր կիր է նաեւ ճիշտ այնպես, ինչպես Իրանը: Պատերազմական իրավիճակում պատժամիջոցների պայմաններում Ռուսաստանի հետ տնտեսական համագործակցությունը դադարեցնելը կարող է ճակատագրական լինել Հայաստանի Հանրապետության համար: Հարյուրավոր երկրներ կիրառում են պատժամիջոցներ, առաջինը՝ Արեւմուտքի զարգացած երկրները, որոնք ոչ միայն ռազմական, այլ նաեւ տնտեսական պատժամիջոցներ են կիրառում:

-Ոստ Վիճակագրական կոմիտեի՝ տնտեսական ակտիվության ցուցանիշը, նախորդ տարիների համեմատ, բավականին աճել է. որքանո՞ւմ սա կապ ունի ռուս-ուկրաինական պատերազմի հետ:

-Ամիջական կապ ունի. եթե չլինեին անձնական տրանսֆերները, համախառն ներքին պահանջարկը, ապա մեծ հարցա-

կանի տակ պիտի դրվեր ընդհանրապես տնտեսական աճ ունենալը: Հայաստանի Հանրապետություն բանկային հաշիվներով մուտք է գործել ավելի քան 5 միլիարդից ավելի դոլար, եւ գրեթե նույնքան, եթե ոչ ավելի, կանխիկ գումար է մուտք գործել Հայաստան: Այսինքն՝ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) կեսից ավելին դրսից է ստացվել: Նաեւ սրան գումարեմք, որ հայկական դրամը մեկ տարվա ընթացքում արժեւորվել է ավելի քան 20%-ով: Կարող ենք ասել՝ աճի հիմնական մասը սա է՝ չհաշված այլ գործոնները: Նման պայմաններում կարելի էր գրանցել 30%-35% տնտեսական աճ, սակայն մենք լավ չենք կարողանում օգտագործել մեր պետական բյուջեն:

-Ոստ Ձեզ՝ այս իրավիճակը որքան ժամանակ կայուն կլինա:

-Ամեն ինչ, ցավոք սրտի, կախված է պատերազմի ընթացքից, կախված կլինի նաեւ Արևելքից, թե ովքեր են ինչպես կոնկրետ տնտեսությունը: Քանի որ տարվա մեծ մասն անցել ենք, եւ կարող եմ ասել՝ Հայաստանը տարեկան կունենա տնտեսական աճի դրական միտում: Բայց մենք դրանով չենք կարող սահմանափակվել, նման արդյունք ունենալու համար պետք է մտածենք ապագայի մասին. տեխնոլոգիական ռեսուրսները, բնական ռեսուրսները պետք է կարողանանք ճիշտ օգտագործել:

Զրույցը էՄՍՍ ՍԻՔՍԵՆՆԱՆԸ

ՎԻՐԱԲՅԱՆԸ՝ ՆՈՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ

Երեկ «Հրապարակ» օրաթերթը գրել էր, որ ԿԳՄՍ փոխնախարար Արա Խզվալյանին որպես փոխարինող շրջանառվում է Երեանի նախկին փոխքաղաքապետ Տիգրան Վիրաբյանի անունը, որը 2020 թ. դեկտեմբերից Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրենի տեղակալն է եւ հեռուստաընկերության գլխավոր պրոդյուսերը: Այս առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրենի տեղակալ, հեռուստաընկերության գլխավոր պրոդյուսեր Տիգրան Վիրաբյանի հետ՝ պարզելու համար՝ նման առաջարկ ստացել է, թե ոչ:

«Ինձ համար այնքան դեժավյու է այս պատմությունը, ամեն անգամ մշակութային կարեւոր պաշտոնից մեկի փոխարինող ինձ են տեսնում, եւ մամուլն այս մասին գրում է», -ասաց նա:

Մեր այն ճշտող հարցին՝ ի վերջո նման առաջարկ ստացել է, թե չէ, մեր գրուցակիցն առանց ժխտելու նշեց, որ մեր հարցերին կպատասխանի օրվա երկրորդ կեսին: Հիշեցնենք, որ ԿԳՄՍ փոխնախարար Արա Խզվալյանը նշանակվել է Մատենադարանի տնօրեն:

ԼԻՂԱ ԵՐԻՎԱՆՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻՆ

Իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները ՀՀ պետությունը վերաբերվում են, ինչպես սեփականության. բոլոր հնարավոր եղանակներով նրանք գումար են կորզում պետությունից: Ծագումով ապարանցի Մաթեոս Ասատրյանը, օրինակ, որ 11 անշարժ գույք ունի, ամեն ամիս պետությունից 100 հազար դրամ տան վարձի փոխհատուցում է ստացել: Պաշտոնական հայտարարագրից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մաթեոս Ասատրյանը 2023 թվականի հունվարին բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածք է գնել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պատգամավորն այն ձեռք է բերել 800 հազար դրամով, որը գտնվում է Երեանում Աջափնյակ վարչական շրջանում: Բացի այս տարածքից, որի միանձնյա սեփականատերն է նա, Ասատրյանը տնօրինում է եւս տասը անշարժ գույքի՝ երկու բնակարան, 5 հողամաս, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ նոր կառուցված, ձեռք բերված եւ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված շինություն եւ հողին ամրացված այլ անշարժ գույք եւ մեկ ավտոտնակ: Երկու բնակարանները գտնվում են Աջափնյակ վարչական շրջանում, որոնք նա ձեռք է բերել նույն օրը՝ 2021 թվականի սեպտեմբերի 16-ին: Այդ բնակարաններից մեկի պարագայում նա համասեփականատեր է, իսկ մյուսի դեպքում 1/3 բաժին է իրենը: Մյուս բոլոր գույքերը նա ունեցել է մինչեւ հեղափոխությունը: Այս ամենը նա գնել է՝ ունենալով միայն պատգամավորի աշխատավարձը՝ որպես եկամուտ, որը մեկ տարվա ընթացքում կազմել է 7 մլն 886 հազար դրամ: Ու թե՛ն Մաթեոս Ասատրյանը պատգամավոր եղած ժամանակ Աջափնյակ վարչական շրջանում 2021թ. 2 բնակարան է գնել, այնուամենայնիվ, օգտվելով պատգամավորի երաշխիքների մասին օրենքի 9-րդ հոդվածից, այն է՝ եթե պատգամավորը երեւանում չունի բնակարան, նրան վարձավճարի փոխհատուցում է տրվում, ստացել է 100 հազար դրամ ամսական փոխհատուցում: Աժ լրատվական ծառայությունից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրել են՝ 2021 թ. Մաթեոս Ասատրյանը օրենքի խախտումով ստացել է վարձավճարի փոխհատուցում: Մանրամասները՝ առաջիկայում:

ԲՈՂՈՔ

«ՈՒԶՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՄԵՉ ԼՍԵՆ»

44-օրյա դաժերազմի ժամանակ էջմիածնի N գործառնախ անհայտ կորած զինծառայողների ծնողները հուլիսի 19-ին կառավարության դիմաց սկսած ակցիան շարունակեցին նախագահի մասավայրի մոտ, ուր սեղափոխվել է Նիկոլ Փաշինյանը: Կառավարության ընդունարանում ծնողները ընդունելության խնդրագրով դիմում են թողել:

Ծնողները պահանջում են գործողություններ ձեռնարկել անհայտ կորած զինծառայողների գտնվելու վայրը պարզելու համար: Նրանք մի մասը հայտարարում է, որ պատերազմից հետո իրենց զավակները ադրբեջանցիների տրամադրած հեռախոսներով կապի են դուրս եկել իրենց հետ, հետեւաբար համոզված են, որ նրանք ողջ են: Ծնողներից Կարինե Մաւակազյանն ասաց. «Մեզ կառավարու-

թյունում ոչ ոք չընդունեց, ոչ մի պատասխան չստացին, արհամարհանքից ու վիրավորանքից բացի, ոչ մի բան չտեսանք: Դիմումը երեսի գոռով գրեցինք, հիմա էլ սպասենք, տեսնենք, թե դիմումին երբ կպատասխանեն: Անձամբ եւ եմ գրել, խնդրել եմ, որ Նիկոլ Փաշինյանը մեզ ընդունի: Ուղղակի խոսենք, հարցեր ու պատասխաններ լինեն: Նույն պահանջով էլ եկել ենք այստեղ: Ուզում ենք՝ մեզ լսեն: Ուզում ենք ասել՝ մեր երեխաներն «այս լուրերում» տալու ենք, մեկ է, այդ հարցը լուծում է ստանալու, չենք թողնելու հանգիստ ապրեն»: Նա հավելեց, որ ԱԾՓ փոխտնօրենն է նախորդ շաբաթ իրենց ընդունել եւ լուրջ դեմքով ասել, որ աշխատում են այդ ուղղությամբ. «Բա ո՞ր է ձեր աշխատածի արդյունքը: Ոչ մի բան չեն արել ու չեն անում: Կարելի՞ է ծնողի վշտի հանդեպ նման արհամարհանք դր-

ստել: Թքած ունեն ու չեն ասում, որ էսքան երեխեքը իրենց համար են գնացել ու իրենց պատճառով են կորել»:

Ակցիայի մասնակիցները հայտնեցին, որ բազմաթիվ նամակներ են գրել վարչապետին եւ նախագահին, սակայն արձագանք չկա, եւ իրենց երեքը նախագահը չի ընդունել: Ակցիայի մասնակիցներին հրավիրեցին նախագահի նստավայր, որտեղ տեսական ժամանակ գտնվում է Փաշինյանը: Նշենք, որ ակցիային մասնակցում են էջմիածնի N գործառնախ («քիմիկներ») գործառնախ զինծառայողների ծնողները, որոնց զավակներին 2021 թվականի հոկտեմբերի 21-ին տեղափոխել էին Արցախ՝ մարտական առաջադրանքի, եւ սխալ հրամանի պատճառով նրանք հայտնվել էին շրջափակման մեջ ու անհետ կորել: Նրանք նստացույց են հայտարարել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

ԴԵՄ Է ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ԵԹԵՐԱԶԲԿՈՒՄՆԵՐԻՆ

ԿԳԻՄԵՆ ՄԻԵԴ



ՀՀ փոխնախագահ Արմեն Աշոտյանի փաստաբան Տիգրան Աթանեսյանը պատրաստվում է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Նա այդ մասին հայտարարեց հունիսի 19-ին՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ:

Փաստաբանը վստահեցրեց, որ իրենք դիմելու են իրավաբանական պայքարի բոլոր մեթոդներին. եթե գործը գնա դատարան, ապա կօգտագործեն նաև այդ ամբիոնը:

Խոսելով Աշոտյանի պահման պայմանների մասին՝ Աթանեսյանը հայտնեց, որ նա պահվում է սովորական խցում. «Արմենի տրամադրությունը մարտական է, որից էլ ընկնում է կա: Հիմա կյանքի այդ հանգրվանն է, քաղաքական գործչի համար դժվար փուլ է Հայաստանում, որը պետք է անցնի պատվով, եւ ես վստահ եմ, որ այդպես էլ կլինի»:

Անդրադառնալով իրավապաշտպան կառույցների արձագանքներին՝ փաստաբանն ասաց. «Հայաստանում իրավապաշտպան չկա, բացի Ավետիք Իշխանյանից: Բոլոր իրավապաշտպաններին, որոնց տեսնում էինք մինչև, այսպես կոչված, հեղափոխությունը, ընդամենը սորոսական էին, ընդամենը ֆինանսավորվում էին. դա բիզնես էր: Տեսեք, թե ինչ հսկայական գրանտներ են ստացել, ինչքան էին խոսում: Ո՛ր են, չկան, որովհետև այդ ուղղությամբ գրանտներ չեն տալիս: Մենք շատ տխուր ու թերզարգացած հասարակություն ենք: Իսկ միջազգային կառույցների մասին սխալ տպավորություն է, որ նրանք գալիս են Հայաստանը ծաղկեցնելու, շենացնելու, օգնելու: Այդ բոլոր կառույցները եւ պետությունները թթած ունեն Հայաստանի վրա: Հայաստանն իրենց համար մի պետություն է, որ ռուսական ազդեցության տակ է, պետք է այդտեղից հանել: Թե արանքում 5 հազար մարդ կսպանեն, թե 100 հազար, իրենք բացարձակ թթած ունեն: Մյուս կողմից՝ ո՛վ կարող է հարգել մի ազգի, որն ընտրում է Նիկոլին», - ասաց Աթանեսյանը:

Նշենք, որ Արմեն Աշոտյանը երկու ամսով կալանավորվել է հունիսի 16-ին: Նա եւ Երեւանի Յերացու անվան բժշկական համալսարանի նախկին ռեկտոր Միքայել Նարինյանը մեղադրվում են բուհին պատկանող մոտ 100 հազար դոլարի գույք հափշտակելու համար: Նրանց մեղադրում են «Ծովասար» հյուրանոցային համալիրի քրոջները ուժեղացված գներով (հաջորդած «ատկատներով») ձեռք բերելու համար այն ժամանակահատվածում, երբ ՀՀ փոխնախագահը գլխավորել է բուհի հոգաբարձուների խորհուրդը:

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը ներկայացրել է իր դիրքորոշումը հանրային մուլտիմեդիայի հեռարձակվող մի քանի ժամանակակից ծրագրերի անջատման վերաբերյալ:

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ տարածած հաղորդագրությունից տեղեկանում է, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության համակարգման ներքո գործող «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը (ՀՀՌՑ) ս.թ. հունիսի 17-ին կարճ ժամանակով դադարեցրեց հանրային մուլտիպլեքսում գործող մի քանի տեսալսողական ծրագրերի հեռարձակումը՝ պայմանավորված ՀՀՌՑ-ի մատուցված ծառայությունների նկատմամբ հեռարձակողների կուտակած ֆինանսական պարտավորությունների ոչ պատշաճ կատարմամբ: Ըստ նախարարության՝ այդպիսի գործողությունները կրելու են պարբերական բնույթ, մինչև հեռարձակողները մարեն կուտակած պարտքերը կողմերի միջև սահմանված պայմանավորվածությամբ համապատասխան:

«Հունիսի 18-ին հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա ստացած բոլոր մասնավոր հեռարձակողները հանդես եկան հայտարարությամբ, որում հայտնեցին իրենց անհամաձայնությունը նախարարության տվյալ որոշման հետ:

Ստեղծված իրավիճակի կապակցությամբ ՀՀ-ն հարկ է համարում ներկայացնել հանրությանը կարգավորող մարմնի դիրքորոշումը:

Նախորդ շաբաթ կարգավորող մարմինը նախարարությանը ներկայացրել էր իր բացասական վերաբերմունքը ՀՀՌՑ-ի վերջին կողմից գործողությունների կապակցությամբ, սակայն անջատման դեմ ուղղված՝ հանձնաժողովի փաստարկները, ցավոք, ուշադրության չեն արժանացել: Այստեղ իրավիճակը ենթադրաբար ուշադրությունը առ այն, որ համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը «մասնակցում է տեսալսողական մեդիայի ոլորտի քաղաքականության մշակմանը», ուստի ՀՀ-ի դիրքորոշումները այս ոլորտում որոշումներ ընդունելիս մշտապես պետք է լինեն ուշադրության կենտրոնում:

Հարկ չհամարելով մանրամասնել ՀՀ-ի կողմից բերված փաստարկները



(որոնց մի մասը ներկայացված է հեռարձակողների հայտարարության մեջ) հանձնաժողովը հայտնում է իր մտահոգությունը տեսալսողական ծրագրերի հեռարձակման իրականացված եւ նախատեսվող դադարեցումների վերաբերյալ:

Հանրային մուլտիպլեքսը ՀՀ միակ տեղեկատվական հարթակն է, որի գործարկման միջոցով պետությունը երաշխավորում է քաղաքացիների իրավունքը անվճար ստանալ բազմակողմանի տեղեկատվություն, եւ հեռարձակվող տեսալսողական ծրագրերի նույնիսկ կարճաժամկետ եթերազրկումը սահմանափակում է քաղաքացիների այդ իրավունքը:

Պարբերաբար իրականացվող եթերազրկումները կարող են բերել հեռարձակողների ֆինանսական կորուստների ավելացմանը, ոչ թե նվազեցմանը: Հետեւանք էլ կլինի այն, որ հեռարձակողները ընդհանրապես չեն կարողանա վճարել ՀՀՌՑ-ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց: Վերջին մեկ տարվա ընթացքում հեռարձակողները զգալիորեն մարել են տարիներով կուտակված ֆինանսական պարտքերը, ինչն արդեն խոսումն ապացույց է այն հանգամանքի, որ հեռարձակողները չեն հրաժարվել եւ չեն հրաժարվում կուտակված պարտքերը մարելուց, սակայն կոշտ մոտեցումը կարող է հանգեցնել անառնալի հետեւանքների թե՛ հեռարձակողների եւ թե՛ հանրային մուլտիպլեքսի գործունեության համար:

ՀՀ-ն կարելի է մեդիալոգոսի բուր մասնակիցների ֆինանսական կարգապահությունը եւ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարգավորող դերը պայմանագրային պարտավորությունների վերահսկման գործում: Սակայն պակաս կարելի է ՀՀ քաղաքացիների տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովումը, որի կարելի է քաղաքացիներից է հանրային մուլտիպլեքսի բնակատեղի եւ անխափան գործունեությունը: Հետեւաբար, ստեղծված իրավիճակը պահանջում է հարցի համակողմանի քննարկում եւ համակարգային լուծում:

Ուստի, ՀՀ-ն համաձայն է լիցենզավորված հեռարձակողների առաջարկի հետ՝ առժամանակ չկիրառել այդպիսի կոշտ մոտեցում հեռարձակողների նկատմամբ եւ հաշվի առնել շահագրգիռ բոլոր կողմերի տեսակետները: Հանձնաժողովը նաև առաջարկում է Ազգային ժողովի, Կառավարության, ՀՀ-ի եւ հեռարձակողների մասնակցությամբ սկսել քննարկումներ եւ իրականացնել աշխատանքներ՝ մշակելու հանրային մուլտիպլեքսի գործունեության եւ զարգացման հայեցակարգ, ինչպես նաև հանրային մուլտիպլեքսում ընդգրկված տեսալսողական ծրագրերի բովանդակության որակի բարձրացմանը միտված որոշումներ՝ ի նպաստ պետության եւ քաղաքացիների:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ՌԳ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի 37-րդ նիստի աշխատանքներին մասնակցելու համար 2023 թվականի հունիսի 19-22-ը Ռուսաստանի Դաշնության Իրկուտսկ քաղաք են գործուղվել ԱԺ պատգամավորներ: Պատվիրակության կազմում են պատվիրակության ղեկավար, Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը, Ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վահե Ղալումյանը, Ազգային

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, Ազգային ժողովի պատգամավորներ Վաղարշակ Հակոբյանը, Բաբկեն Թունյանը, Ալեքսեյ Սանդիկովը, Միքայել Թումասյանը, Շիրակ Թորոսյանը, Գեղամ Մանուկյանը:

ԿՄԵԿՆԻ ՄՏԲԱՄԲՈՒՐԳ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 2023 թվականի հոկտեմբերի 1-5-ը Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Գեորգյանը կգործուղվի Ստրասբուրգ՝ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Ժողովրդավարության եւ կառավարման եվրոպական կոմիտեի Կանաչ հանրային կառավարման աշխատանքային խմբի նիստին, ինչպես նաև Հանուն ժողովրդավարության

համաշխարհային համաժողովի նախապատրաստական աշխատանքներին մասնակցելու համար:

Հիշեցնենք, որ հունիսի 3-ին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ղեկավարած պատվիրակությունը Եռօրյա այցով մեկնել է Վարշավա՝ Լեհաստան: Պատվիրակության կազմում ընդգրկված էր նաև «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Գեորգյանը, ում, սակայն, թույլ չեն տվել օդանավ բարձրանալ, որովհետև ՍԵՎՏ-ը փակ է երկրից դուրս գալու իրավունք չունի:

Օդանավակայանում են իմացել այդ մասին, մինչդեռ ԱԺ-ն հոգացել էր նրա տուֆների, հյուրանոցի եւ մյուս այլ ծախսերը: Գործուղումից մի քանի օր առաջ պատգամավորը հավաստիացրել է աշխատակազմին, որ դատարանը թույլատրել է իր ելքը, որ այդ մասին իր փաստաբանն է իրեն փոխանցել:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓՈՂՈՑՈՒՄ, ԹԵ՞ ՍԱՐԵՐՈՒՄ

Իջեանի Բլույսյան փողոցի բնակիչ, դասախոս, լրագրող, գրող Զավեն Ալավերդյանը դժգոհում է իրենց փողոցում տիրող իրավիճակից: Նրա խոսքերով՝ իջեանցի որոշ անասնատերերի թվում է, որ Բլույսյան փողոցը սարերի արտոլվայր է, այդ փողոցում գիշեր-ցերեկ անարգել գտնվում են խոշոր եղջերավոր անասունների նախիրներ, ձիերի երամակներ: Այժմ դպրոցականների ամառային արձակուրդների շրջանն է, երեխաները խաղում են շենքերի բակերում, խոշոր եղջերավոր անասունների ու ձիերի կողմից երեխաների պրզահարման ու սմբակահարման վտանգն իրական է: Զ. Ալավերդյանը Իջեանի համայնքապետարանից, պետական համապատասխան կառույցներից ակնկալում է, որ նրանք կզգուշացնեն անպարտաճանաչ անասնատերերին, որ նրանք անասունները հեռու պահեն քաղաքի բնակելի հատվածից, իսկ եթե այդ զգուշացումը արդյունք չտա, պետք է ձեռնարկել ավելի խիստ ու գործուն միջոցներ:

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է

2023թ. հուլիսի 18-ին գրավոր կերպով Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել Գագիկ Մատիսյանը՝ խնդրելով լուծել Դիլիջան համայնքի եւ իր միջև 2009թ. հուլիսի 27-ին կնքված, Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 129/7 հասցեում գտնվող 20 քառակուսի մետր մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրման մասին պայմանագիրը: Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, հիմք ընդունելով այդ դիմումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ մասով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների պահանջներով եւ հիմք ընդունելով 2009թ. հուլիսի 27-ին կնքված պայմանագրի 9.1 կետը, որոշել է սահմանված կարգով լուծել նշված պայմանագիրը:

ԳԻՐԻ 5-ԲԿ ԸՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Հուլիսի 17-ին Բերդում կայացել է Տավուշի թեմի հոգևոր առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստայանի «Ավետյաց երկրի տեսիլքով» գրքի բաց քննարկում-շնորհանդեսը, որին ներկա են եղել Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Սիեր Պապյանը, 44-օրյա պատերազմի ընթացքում հանուն հայրենիքի նահատակված զինծառայողների հարազատները: Գրքի վերաբերյալ վերլուծական զեկույցներով հանդես են եկել Բերդի տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Արամ քահանա Սիրադյանը, բանաստեղծ Ալբերտ Պապյանը, Բերդի ավագ դպրոցի տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ Լուսինե Թումանյանը, «Բերդ» պատմամշակութային արգելոցի Բերդի պատմության եւ կենցաղի թանգարանի տնօրեն Արթուր Երկանյանը: Գրքի մասին իր խոհերն է ներկայացրել Բագրատ արքեպիսկոպոս Գալստայանը: Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանն իր երախտագիտությունն է հայտնել Բագրատ արքեպիսկոպոս Գալստայանին գիրքը հեղինակելու եւ հայրենակներ գործունեության համար: Սա «Ավետյաց երկրի տեսիլքով» գրքի 5-րդ շնորհանդեսն էր. նախկինում նման շնորհանդեսներ կայացել էին Հայաստանի գրողների միությունում, Իջեանում, Նոյեմբերյանում եւ Գյումրիում:

ՈՍԿԱՆ ՍՈՐՈՒՅՈՒՄ Տավուշ

ԲՅՈՒՋԵ

ԿՏՐՎԵՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

«ՀՀ 2024 թվականի դեռահաս բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի նախնական արձագանքով ՀՀ առողջապահության ոլորտի բյուջեային ծրագրերն իրականացնելու համար հաստատված միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսվել է շուրջ 168 մլրդ դրամ: Այս մասին ասել է ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն ԱԺ առողջապահության հարցերի մեծահասակ հանձնաժողովում հուլիսի 19-ին տեղի ունեցած աշխատանքային հանձնարարական ժամանակ: Ըստ Անահիտ Ավանեսյանի՝ 18 մլրդ դրամ է նախատեսվել Առողջության աղյուսակագրության համադարձակ համակարգի ներդրման համար, որը կսկսի գործել 2024 թվականի հուլիսի 1-ից: Առաջին փուլի ռազմավարությունն է 1-ին, 2-րդ եւ սահմանափակումներով 3-րդ խմբերի հաճախումները ունեցող քաղաքացիները:



Նախարարի հավաստմամբ՝ ներկա դրությամբ մշակվում են ենթաօրենսդրական ակտեր, այլ նախագծեր: Մինչեւ տարեվերջ պատրաստ կլինի ամբողջական փաթեթը: Նշվել է, որ 2023 թվականի ավարտին պատրաստ կլինեն 20 ամբուլատորիաների, պոլիկլինիկաների վերանորոգման եւ Վեդիի, Վարդենիսի ու Արթիկի ԲԿ-ների նախագծերը, որոնց շինարարությունը կսկսվի գալիք տարի: Այս տարի շահագործման կհանձնվեն Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի եւ Վայոց ձորի բժշկական կենտրոնները: «Մեր ընդհանուր քաղաքականությունը շինարարության գծով որակական չափանիշներն են, կկառուցվեն եւ շահագործման կհանձնվեն ժամանակակից բուժաստատություններ», - ասել է Անահիտ Ավանեսյանը: 2024 թվականին նախարարությունը կիրականացնի «Հանրային առողջության պահպանում», «Առողջության

առաջնային պահպանում», «Մոր եւ մանկան առողջության պահպանում», «Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում», «Սոցիալապես անապահով եւ առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» եւ մի շարք այլ բյուջեային ծրագրեր: ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նարեկ Զեյնալյանն ուշադրություն է հրավիրել մի շարք հարցերի, որոնք շտկման կարիք ունեն: Նա ընդգծել է արդյունքային ցուցանիշների հստակեցման անհրաժեշտությունը:

Աշխատանքային քննարկմանը հանգամանալի անդրադարձ է եղել նաեւ բնագավառի այլ ծրագրերին եւ առկա խնդիրներին: Աշխատանքային քննարկումը նախագահել է Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նարեկ Զեյնալյանը, մասնակցել են հանձնաժողովի նախագահի տեղակալ Լուսինե Բաղդասյանը, առողջապահության փոխնախարար Արմեն Նազարյանը, ֆինանսների փոխնախարար Վահան Սիրունյանը, նախարարությունների ներկայացուցիչներ, ոլորտների մասնագետներ:

ՈՒՇԱԳՐԱԿ

ԳԺԳՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունն են ահազանգել Կենտրոն վարչական շրջանի Աբովյան փողոցի բնակիչները: Բնակիչների խոսքով՝ արդեն տեսական ժամանակ է, ինչ Աբովյան 22 ա հասցեի շենքի բակում վիստում են թրթուրներ, ճիճուներ, որոնք թափվում են բակի ծառերից: Մեզ հետ զրույցում բնակիչները դժգոհեցին, որ ոչ մի սանիտարահիգիենիկ նորմ չի պահպանվում, ծառերը համապատասխան նյութերով չեն լվացվում, եւ արդյունքում ունենք այն, ինչ ունենք: «Այն աստիճան է հասել, որ թրթուրներն արդեն պատուհաններից, դռներից ներս են լցվում: Բակում ունենք երեխաների համար զարգացման կենտրոն, եւ վերջիններիս ծնողներն անհանգստացած են, քանի որ դռներից թրթուրները ներս են լցվում, եւ օրվա մեջ մի քանի անգամ ստիպված են լինում մաքրել, որպեսզի երեխաները ականատես չլինեն այդ պատկերին», - նշեցին բնակիչները: Այսպիսով, եւս մեկ անգամ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Դուկասյանին հորդորում ենք, որպեսզի ուշադրություն

դարձնի իր ղեկավարության տակ գտնվող Կենտրոն համայնքի խնդիրներին: ԼԻՊԱ ԵՐԿՐԱՅՈՒՅԱԼ

ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը 2022 թվականի հայտարարագրում հայտարարագրել է բնակարան՝ բազմաբնակարան բնակելի շենքում Արաբկիր վարչական շրջանում, որը 2001 թվականին ժառանգություն է ստացել. ումից՝ Վարդանյանը չի նշել: Հանձնված եւ վերադարձված փոխառությունները կազմել են 53 մլն 974 հազար դրամ, որը «ԱՐՍԱԼԵԴԱ» ՍՊԸ-ի կողմից է: Այսինքն՝ Վարդանյանը ձեռք է բերել հիպոտեկով բնակարան «ԱՐՍԱԼԵԴԱ» ՍՊԸ-ի կողմից Արաբկիր վարչական շրջանում կառուցվող բնակելի շինությունից: Կարողանալու է «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոն» հիմնադրամի եւ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ եւ «ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ: ԼՄՍԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 19 ճՏՊ. 5 մարդ զոհվել է, 36-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԿԱՐԵՎՈՐ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՉԷԻՆ ՄԽԱԼՎՈՒՄ



Հաշվի առնելով բազմաթիվ քաղաքացիների մտահոգությունները...

Նա նաև նշել է, «Խնդրել է պարզաբանել, թե արդյոք տեսչական մարմինը...

2023 թվականի հունվարի 1-ից խմելու ջրի ջրամատակարարման համակարգը...

Հարուցվել է 112 վարչական վարույթ, որից 106-ը հարուցվել է տեսչական մարմնի...

Տրվել է շուրջ 24 կարգադրագիր շահագործող կազմակերպությունների պատասխանատուներին...

Այս ամենից կարելի է ենթադրել, որ ինչպես մեր, այնպես էլ քաղաքացիների կասկածները...

Անհրաժեշտություն են համարում նաև վարչարարության խստացումը, առավել խիստ պատժի կիրառումը...

Պատկան մարմինները ահռելի պատասխանատվություն են կրում այս հարցում: Կարելի էր հանրային առողջությունը...

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է «ՆՈԳՐԱՍ» ՍՊԸ-ի կնիքը, ՀՎՀՀ՝ 01825048: Համարել անվավեր:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ԽՈՇՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ՝ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Ամունդի-Ակբա»-ի Հավասարակշռված և Պահպանողական կենսաբուսական ֆոնդերի ակտիվներից ներդրում է կատարել...



Ֆոնդը կառավարվում է «Ամբեր Կապիտալ Արմենիա»-ի կողմից, որի ակտիվները կազմում են շուրջ 60 մլն ԱՄՆ դոլար...

ընդգծել է. «Այս ներդրմամբ ընկերությունը հնարավորություն կունենա էականորեն մեծացնել ընկույզի այգիները...

«Վոլնաթ Ֆարմ»-ը ցանկանում է ստեղծել համայնք, որտեղ բոլոր ընդդեմ արտադրողները կարող են միմյանց հետ կիսվել...

ՆԻՍ

ՓՈՔՐ ՈՒ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի 21-րդ նիստը:

Ողջունելով խորհրդի անդամներին՝ փոխվարչապետը նշել է, որ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության և շարունակական աճի համար բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայրի ձեռավորումը...

միջավայրի իրավակարգավորող շրջանակը շարունակաբար կլավարկվի՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով փոքր և միջին ձեռնարկությունների կայուն զարգացման համար:

մարկային մեքենաների կիրառության կառուցման խախտման համար նախատեսված տուգանքների հիմնավորվածությանը, ինչպես նաև արտահանման գործընթացում ի հայտ եկող խնդիրներին:

«ժողովուրդ» օրաթերթում և ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԵՏԱՀԱՅԱՑ

ՄՐՅՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

«Մլավյանսկի բազար 2023» երգի միջազգային մրցույթում Հայաստանի մասնակցությունը նշանավորվեց կարևոր արդյունքներով: Նախ «Մլավյանսկի բազար 2023»-ի մանկական կատարողների մրցույթում 2-րդ տեղը զբաղեցրեց Անահիտ Գալստյանը, իսկ, ահա, «Մլավյանսկի բազար 2023» երիտասարդ կատարողների մրցույթում գլխավոր մրցանակը՝ Գրանդ Պրինց, երգչուհի Մաշա Մնջոյանի շնորհիվ բերվեց Հայաստան: «Մլավյանսկի բազար 2023» մրցույթի հայաստանյան դասվիրակության ղեկավար Վրեժ Կիրակոսյանը նշել է, որ արդյունքները բավական գոհացուցիչ են:



«Անահիտ Գալստյանը հենց սկզբից առաջատար էր: Ժյուրիի բոլոր անդամների կողմից ստացել էր 10 միավոր, այսինքն՝ հավանում էր Գրան պրինցին: Մրցույթի երկրորդ օրը ժյուրիի անդամներից մեկի կողմից ստացավ 8 միավոր: Ծիշտն ասած, չհասկացանք, թե ինչու, ամեն դեպքում, դրա հետևանքով Անահիտը զիջեց առաջատարի դիրքը: Այնուհետև 2-րդ հորիզոնականը կիսեցինք ՌԴ-ի մասնակցի հետ, թեպետ մենք առաջատար ենք եղել: Ինչեւէ, այս արդյունքը ես գոհացուցիչ է, բավական ուժեղ մրցակցային մրցույթում Անահիտը զբաղեցրեց 2-րդ հորիզոնականը», - ասաց Վրեժ Կիրակոսյանը:



Անահիտ Գալստյանը տպավորված է մրցույթով: Նա մեծ ոգեւորությամբ է ներկայացրել Հայաստանը: «Առաջին օրը հանդես եմ եկել I'm My Tize կատարումով եւ ստացա առավելագույն գնահատականները: Երկրորդ օրը կատարել եմ երգ՝ Սոնա Շահգեղյանի երգացանկից: Առաջին օրն այդքան վախ չունեի, երկրորդ օրը մի քիչ հուզված էի, թեպետ դա ինձ չխանգարեց, եւ 18 երկրների ցանկում մեր երկիրը 2-րդ հորիզոնականը զբաղեցրեց: Այսպիսի արդյունքներ չէի ակնկալում», - ասաց Անահիտ Գալստյանը: Մրցույթի գլխավոր մրցանակը Հայաստան բերած երգչուհի Մաշա Մնջոյանը մասնակցության հենց սկզբից տրամադրված էր հաղթանակի: Առաջին օրը ժյուրիի կողմից տրված միավորներով Մաշան 4-րդ հորիզոնական է զբաղեց-

նում, երկրորդ օրն ունեցած ելույթով փոխում է մրցույթի էլքը: «Երկրորդ օրը ելույթից առաջ ինձ ասում են. «Մաշա՛ ջան, դու շատ լավն ես, բայց այստեղ Հայաստանին մրցանակ չեն տա»: Ես ասացի՝ այդ ինչպե՛ս: Հավաքվեցի ու շատ ավելի լավ հանդես եկա՝ նոր երգով ու նոր կերպարով: Այդքան ճանապարհ եմ կտրել անցել, իմ երկիրն եմ ներկայացնում, ինչպե՛ս կարող եմ չհաղթել: Իմ ելույթից հետո ընկերներս, ծանոթներս, որոնք այդ ընթացքում միավորների արագ հաշվարկ էին կատարում, սկսեցին գրել, որ հաղթանակն իմն է: Ուզում եմ ընդգծել, որ որքան էլ կողքից խոսեն, որքան էլ սկզբում արդյունքները գոհացուցիչ չլինեն, պետք չէ հիասթափվել, թեւաթափ լինել, անհրաժեշտ է պայքարել», - ասաց Մաշա Մնջոյանը:

Մաշայի կատարումները չէին գնահատվում միայն ժյուրիի միավորներով: Շատ մասնագետներ, մրցույթի մասնակիցներ, երաժշտասերներ մոտենում էին ու իրենց հիացմունքի, գովեստի խոսքերն էին արտահայտում: Վրեժ Կիրակոսյանը տեղեկացրեց, որ քննարկվում է «Մլավյանսկի բազար» երգի միջազգային մրցույթի հաջորդ տարվա ծրագիրը: Քանի որ հաջորդ տարի աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի 100-ամյակն է, քննարկվում է մրցույթի մեկ օրը նվիրել Շառլ Ազնավուրին: Նախատեսվում է բացմանը հրավիրել նաեւ Մաշա Մնջոյանին: Դրանից բացի, քննարկվում է նաեւ «Մլավյանսկի բազար 2023»-ի մանկական կատարողների մրցույթի ժյուրիի կազմում ընդգրկել նաեւ Մաշա Մնջոյանին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆ

«Մանչեսթեր Յունայթեդի», «Էվերտոնի», Անգլիայի հավաքականի նախկին ֆուտբոլիստ, ամերիկյան «Դի Սի Յունայթեդի» գլխավոր մարզիչ, 37-ամյա Ուեյն Ռունին դրական է գնահատել «Մանչեսթեր Սիթի» կատարողների գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլայի ազդեցությունն անգլիական ֆուտբոլի վրա: «Գվարդիոլայի ղեկավարությամբ «Մանչեսթեր Սիթին» նվաճեց ամեն ինչ: Ցավոք, հիմա նրանց գերիշխանության ժամանակն է: Գվարդիոլան դարձավ անգլիական ֆուտբոլի վրա ազդեցություն թողած լավագույն երեւոյթներից: Նա ազդեցություն է թողել նաեւ Անգլիայի հավաքականի վրա, քանի որ մարզել է երիտասարդ անգլիացի խաղացողների, որոնք հետագայում համարել են ազգային թիմը: Նրանք հավաքականում տարածել են Գվարդիոլայի ոճն ու գաղափարները»,- Ռունիի խոսքը մեջբերում է BBC-ն: Անցած մրցաշրջանում «Մանչեսթեր Սիթին» նվաճել է Անգլիայի չեմպիոնի տիտղոսը, գավաթը, Չեմպիոնների լիգայի գավաթը:

«ԱԼԱՇԿԵՐՏԸ» ՊՈԳՈՐԻՑԱՅՈՒՄ

«Վաշկերտը» Չեռնոգորիայի մայրաքաղաք Պոդգորիցայում է եւ պատրաստվում է Կոնֆերենցիաների լիգայի որակավորման առաջին փուլի պատասխան հանդիպմանը: Երեւանյան թիմը կիրառելու է «Սրբաբան» Ֆիլատին: Հանդիպումը տեղի կունենա հուլիսի 20-ին եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով 22:30-ին: Երեւանում տեղի ունեցած առաջին խաղում գրանցվել էր ոչ-ոքի՝ 1:1:

«ԻՆՏԵՐ»-Ն ՈՒ «ԲԱՎԱՐԻԱ»-Ի ԳԱՐՊԱՍԱՊԱՔԸ

Իտալիայի գավաթակիր եւ սուպերգավաթակիր Միլանի «Ինտերը» այս ամիս կփորձի ձեռք բերել Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» եւ Շվեյցարիայի հավաքականի դարպասապահ Յան Ջոնսթրին: հաղորդում է twitter.com/fabrizioromano-ն: Բանակցությունները մոտենում են ավարտին: Տրանսֆերի արժեքը կարող է կազմել 6 միլիոն եվրո: Յան Ջոնսթրին «Ինտերում» կփոխարինի կամերունցի դարպասապահ Անդրե Օնանային, որն առաջիկայում կմիանա անգլիական «Մանչեսթեր Յունայթեդին»: Ջոնսթրին այս տարվա հունվարին է Մյունխենից Բորուսիայից» տեղափոխվել «Բավարիա», որի կազմում մասնակցել է 25 հանդիպման, բաց թողել 31 գոլ:

ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄՈՒՄ Է

Միլանի «Ինտեր»-ը նոր մրցաշրջանի նախապատրաստական փուլում ընկերական հանդիպում է անցկացրել «Լուգանո»-ի հետ: Ստուգողական հանդիպումն ավարտվել է 3:0 հաշվով՝ հօգուտ «Ինտեր»-ի: Միլանյան ակումբի մեկնարկային կազմում էր Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Զենրիի Միսիթարյանը, որը փոխարինվել է 65-րդ րոպեին: Նոր մրցաշրջանի նախապատրաստական փուլի շրջանի շրջանակներում «Ինտեր»-ը հավաք կանցկացնի նաեւ Ճապոնիայում, որտեղ ընկերական խաղեր կանցկացնի Եվրոպական եւ արաբական թիմերի հետ:

ՇՈՌԻ ԲԻԶՆԵՍ

ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՆԲԱՄԱՄՆԵՐ

Հուլիսի 21-ին Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում կկայանա ռեժիսոր, պրոդյուսեր Սերգեյ Գոշամանյանի եւ սցենարիստ Արմեն Վարդանյանի No Makeup ներկայացման պրեմիերան: «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է դերասանուհի Լիա Զախարյանի հետ ներկայացման եւ իր կերպարի մասին: Դերասանուհու խոսքով՝ իր կերպարը քաղբենի, կյանքը վայելող եւ էգոիստ կնոջ կերպար է, որը չի հասկանում, թե ինչ է զգում ամուսնու նկատմամբ, եւ արդյոք խանդում է, թե ոչ: -Ներկայացման մեջ ո՞րն է Ձեր ասելիքը: -Իմ ասելիքը ներկայացման մեջ այն է, որ գումարը եւ վայելքներն այնքան կարևոր չեն, որքան մարդկային եւ առավել

եւ՝ ընտանեկան հարաբերությունները: Ուշադրություն պետք է դարձնել ընտանիքի, կողակցի վրա, հասկանալ նրա ցանկություններն ու պահանջները եւ նույնն էլ ակնկալել եւ ստանալ դիմացիկից: Այդ պարագայում սերը կունենա հնարավորություն՝ հավերժական լինելու: -Արդյոք կան ընդհանուր գծեր Ձեր եւ Ձեր կերպարի միջև: -Այն մարդիկ, որոնք կզան եւ կնայեն մեր ներկայացումը, տեսնելով, թե ինչպիսին է իմ կերպարը, կհասկանան, որ ընդհանուր գծեր չկան: Եվ դա ինձ համար շատ ուրախալի փաստ է, որ մարմնավորում եմ ինձանից շատ տարբեր կնոջ կերպար: Նշենք, որ ներկայացման դերասաններն են Ելենա Վարդանյանը, Անի Պետրոսյանը, Աննա Մանուչարյանը, Լիա Զախարյանը, Ստեփան Ղամբարյանը, Ադաս Մանուկյանն ու Միեր Միսիթարյանը:

ՀԱՅՏՆԻ ՌԵՓԵՐԸ՝ ԱՐՑԱՄԻ ՄԱՄԻՆ

Ռուսաստանակ հայ երգիչ Խչոն ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում հրապարակել է տեսանյութ, որտեղ ներկայացվում է Ստեփանակերտի ամենամեծ սուպերմարկետը՝ շրջափակման այս օրերին: «Ահա թե ինչպես են ապրում մարդիկ Արցախում: Արդեն կես տարի է՝ նրանք շրջափակման մեջ են, երեխաները մահանում են սովից: Ես ամաչում եմ, որ ապրում եմ նման ժամանակներում», - գրել է երգիչը: Նշենք, որ արդեն կես տարի է՝ Ադրբեջանը շրջափակման մեջ է պահում Արցախի Հանրապետության շուրջ 120.000 ժողովրդին՝ նպատակ ունենալով էթնիկ գտում իրականացնել Արցախում: **ԻՆԵՍԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**


● Հուլիսի 21-ին Երեւանի Հրաջյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Օրնիֆլ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



Էջը՝ ԱՆՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՊՐՈԲԱՑԻԱ

ՀԱՐՑ. Ո՞վ կարող է լինել որոբացիայի կամավոր:
Արա Բոլեյան (29 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Կամավոր կարող է լինել տասնույթ տարին լրացած այն անձը, որը՝
1) տիրապետում է հայերենին,
2) ուսանում է իրավագետի, սոցիոլոգի կամ հոգեբանի մասնագիտությամբ կամ ունի պրոբացիայի ծառայության գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ համապատասխան որակավորում:

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայություն

«ԺՈՂՎՈՒՐԳ». Կամավոր չի կարող լինել այն անձը, որը՝
1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, կամ
2) դատապարտվել է հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, կամ
3) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որեւէ մեկով:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ ծանոթանալ ՀՀ դեռահաս վերահսկողական ծառայության կանոնադրությանը:
Նարինե Մնացականյան (34 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ պետական վերահսկողական ծառայության կանոնադրությանը կարող եք ծանոթանալ կայքի «Օրենսդրություն» բաժնից՝ այցելելով «Կանոնադրություն» ենթաբաժինը:

ՀՀ ՊԿԾ

«ԺՈՂՎՈՒՐԳ». ՀՀ պետական վերահսկողական ծառայության կանոնադրությունը կարող եք նաեւ ներբեռնել եւ տպել www.supervision.am կայքից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Ստեփանակերտի քաղաքապետարանից հայտնում են, որ վառելիքի բացակայության պատճառով խոտհնձիչները չեն օգտագործվում. օգնության են գալիս ավանդական գերանդիները:
«Ստեփանակերտի բուսաբանական այգու աշխատակիցները (հիմնականում տարեցներ) ամառվա տապին մաքրում են քաղաքի խոտածածկ տարածքները՝ կանխելով օձերի ակտիվացումն ու հրդեհների վտանգը», - ասվում է հայտարարության մեջ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+4 + 10 +23 + 27	Արարատ	+16 + 19 +32 + 34
Կոտայքի լեռներ	+5 + 10 +22 + 24	Արմավիր	+12 + 14 +30 + 32
Կոտայքի նախալեռներ	+13 + 15 +26 + 28	Վայոց ձորի լեռներ	+8 + 10 +18 + 20
Գեղարքունիք	+8 + 10 +16 + 20	Վայոց ձորի նախալեռներ	+15 + 18 +30 + 32
Լոռի	+9 + 14 +20 + 24	Սյունիքի հովիտներ	+16 + 20 +24 + 28
Տավուշ	+14 + 18 +23 + 28	Սյունիքի նախալեռներ	+8 + 11 +19 + 21
Արագածոտնի լեռներ	+5 + 10 +21 + 23	ԼՂՀ	+13 + 16 +27 + 31
Արագածոտնի նախալեռներ	+12 + 16 +25 + 29	Երեւան	+14 + 16 +31 + 33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 19.7.2023

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: